

ՀԵՅ

Ա. Ի. ՈՒՂՑԱՆՈՎԸ

հ լ թ ի զ ի

ՄԱՆԿԱԿԱՆ

ՅԵՎ

ԴՊՐՈՅԱԿԱՆ

ՏԱՐԻ ՆԵՐԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ


Թարգմ. ԳԻՆՈՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1 9 3 4

087.1

ԴԼ-66



Պրիբիլավսկայ տունը Սիմբիրսկում, ուր ապրել է Վ. Ի. Լենինը
մինչև 5 տարեկան հասակը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Մեր առաջնորդ Վլադիմիր Իլիչ Ռույանովը (Լենին) ծնվել է 1870 թվի ապրիլի 10 (23)-ին, Սիմբիրսկ քաղաքում, Վոլգայի ափին, վորն այժմ ի պատճի առաջնորդի վերանվանված ե Ռույանովսկ:
Վլադիմիր Իլիչի հայրը՝ Իլիա Նիկոլայևիչն այն ժամանակ ժողովրդական գպրոցների տեսուչ եր Սիմբիրսկ նահանգում։ Նա ծագումով հասարակ տոհմից եր, շուտ ե զրկվում հորից և միայն ավագ յեղբոր ոգնությամբ դժվարությամբ կարողանում ե կը թություն ստանալ։ Համալսարանն ավարտելուց հետո, նա ուսուցիչ ե լինում սկզբում Պենզայում և Նիժնիում։ Աշակերտները շատ ելին սիրում նրան, քանի վոր նա յերբեք չեր պատժում նրանց, նրանցից չեր գանգատվում վերատեսչին, համբերությամբ և շատ հասկանալի կերպով բացատրում եր նրանց դասը և կիրակի որերը ձրի պարապում եր այն աշակերտների հետ, վորոնք յետ ելին մնում դասերից և տանը բացատրող չունեյին։ Այժմ ել նրա նախկին աշակերտներից մի քանիսը, վորոնք արդեն խորին ծերության հասած մարդիկ են, սիրով և հարգանքով են հիշում նրան։ Սիմբիրսկում նա ձգտում

26 AUG. 2013

եր ավելի շատ դպրոցներ հիմնել չքավորների, գլուղական յերեխաների համար և յեռանդ ու աշխատանք չխնայելով, այդ գործի համար բոլոր յեղանակներին, շրջում եր նահանգում:

Վաղիմիր իլիչի մայրը՝ Մարիա Ալեքսանդրովնան բժշկի աղջկի եր. նա իր պատանեկության մեծ մասն անց եր կացը և գյուղում, վորտեղ գյուղացիները շատ եյին սիրում նրան: Նա լավ յերաժիշտ եր, լավ գիտեր յերաժշտություն, ֆրանսերեն, անգլերեն, ու գերմաներեն լեզուները և այդ բոլորը սովորեցնում եր յերեխաներին: Նա չեր սիրում մեծ հասարակություն և զվարճություններ, իր ժամանակի մեծ մասն անց եր կացնում տանը, յերեխաների հետ, վորոնք շատ եյին սիրում և հարցում նրան: Բավական եր նա հանգիստ ու փաղաքշական ձայնով մի բան ասեր յերեխաներին, վորպեսզի նրանք լսելին նրան: Իլիա Նիկոլայեվիչը նույնպես իր հանգիստը սիրում եր անց կացնել ընտանիքում, զբաղվելով յերեխաների հետ, կամ խաղալով նրանց հետ, կամ վորեե բան պատմելով:

Այն ընտանիքը, վորտեղ մեծացել ե Վաղիմիր իլիչը, շատ համերաշխ եր: Նա յերրորդ յերեխան եր, շատ աղմկարար, աշխույժ և ուրախ, թուխ աչքերով: Նա քայլել սկսեց համարյա իր քույր Ոլիայի հետ միասին, վորը $1\frac{1}{2}$ տարով նրանից փոքր եր: Ոլյան սկսեց քայլել շատ վաղ և իր շրջապատի համար աննկատելի կերպով: Վաղողյան ընդհակառակն ուշ քայլել սկսեց, և յեթե նրա քույրիկն առանց ձայն հանելու վայր եր ընկնում, ինչպես դալակն եր ասում, «շըը-փում» եր ինքնուրույն կերպով վոաքի լեր յելնում յերկու ձեռքով հատակին հենվելով, սակայն Վալողյան թըրըմփում եր անպայման գլուխը գետնին խփելով և սոսկալի աղաղակ եր բարձրացնում:

Իլիա Նիկոլայևիչ Ռուսական
(Ա. Ի. Անդրեևի հայրը)

Յերեի նրա գլուխը ծանրություն եր անում: Բոլորը վագ եյին տալիս նրա մոտ. մայրը վախենում եր, վոր նա լուրջ կերպով կջարդի իր գլուխը կամ հիմարի մեկը դուրս կզա: Իսկ ներքին հարկում ապրող ծանոթներն ասում եյին, վոր իրենք միշտ լսում են թե ինչպես Վալողյան գլուխը հատակին ե խփում: «Մենք ել ենք ասում» նա կամ շատ խելացի, կամ շատ հիմար մարդ գուրս կզա»:

Վաղողյան լինելով շատ աշխույժ տղա, սիրում եր աղմկարից խաղեր, վազվել, և սովորաբար իշխում եր քրոջ վրա: Ալսպես, նա Ոլիային քշում եր բազկաթոռի տակ և հետո հրամայում «քայլով մարշ դի-վանի տակից»: Լինելով աշխույժ և աղմկարար ամեն տեղ, Վաղողյան բարձրածայն բղավում եր նաև շոգենավի վրա, յերբ ամբողջ ընտանիքը նավ եր նստել ամառը Կազանի նահանգի գյուղերից մեկը գնալու:

— Շոգենավի վրա չի կարելի բարձր բղավել, — ասում ե մայրը:

— Բայց շոգենավն ինքն ել ե բարձր բղավում, — պատասխանում ե Վալո-դյան առանց շփոթվելու և նույնպես բարձրածայն:

Յեթե պատահում եր, վոր Վալո-դյան կամ Ոլիան չափից դուրս չարություն եյին անում, մայրը նրանց հանգստացնելու համար, տանում եր հոր առանձնասենյակը և նստեցնում բազկաթոռին, վորին նրանք «սեվ բազկաթոռ» ելին անվանում: Նրանք այդ բազկաթոռի վրա, վորպես պատիժ պետք ե նստեյին անքան, մինչև մայրիկը թույլ տար կրկին խաղալու դնալ: Մեկ անգամ Վաղողյանն նատեցրին «սեվ բազկաթոռին»: Մայրիկին կանչեցին և նա մոռացավ Վալոդյաի մասին, բայց հետո հանկարծ հիշելով, վոր բավական յերկար ժամանակ նրա ձայնը չի լսում, գնաց-



Մարիա Ալեքսանդրովնա Ռուսական
(Ա. Ի. Անդրեևի մայրը)

առանձնասենյակը։ Վալոդյան առաջվա նման հանգիստ նստած եր
«սեվ բազկաթոռին», բայց միայն խորը քնել եր։ Խաղալիքներով
նա քիչ եր խաղում, ավելի շուտ կոտրատում եր նրանց։ Վորով-
հետև մենք, մեծերս աշխատում եյինք թույլ չտալ նրան այդ անելու,
ապա նա յերբեմն թագնվում եր մեղանից։ Հիշում եմ, իր ծնն-
դյան որը, դայակից ստվարաթղթից պատրաստված լեռաձի մի
սահնակ նվեր ստանալով, նա, խաղալիքն առած կասկածելի կեր-
պով անհայտացավ։ Մենք սկսեցինք փնտռել նրան և գտանք մի
դուռն յետև։ Նա հանգիստ և կենտրոնացած, պտտում եր ձիու
վոտքերը, մինչեւ բոլորը մեկը մյուսի լեռաձից գետին թափվեցին։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Վալոդյան կարդալ սովորեց մալրիկից հինգ տարեկան հասա-
կում, թե նա և թե նրա հետ միաժամանակ կարդալ սովորած
Ռլյան, շատ սիրեցին ընթերցանություն և հաճույքով կարդում
եյին մանկական գրքեր ու ամսագրեր, վոր մեծ քանակությամբ
ստանում եր մեր հայրը։ Շուտով նրանք սկսեցին ուսուական
պատմությունից պատմվածքներ կարդալ և վոտանավորներ սովո-
րել բերանացի։ Այդ բանը, սակայն, Ռլյան ավելի յեր սիրում,
վորը շատ լերկար ու դժվար վոտանավորներ գիտեր և մեծ ար-
տահայտչությամբ արտասանում եր բերանացի։

Յերբ Վալոդյան յոթ-ութ տարեկան եր, նրա սիրելի վոտա-
նավորն եր «Անտունի յերգը» վոտանավորը, վորը նա արտասա-
նում եր մեծ վոգեորությամբ ու խիզախ։

Հիմա բար հարուստին
Գանձն ել քուն չի բերում, —
Աղքատը մերկ, բազելի նման,
Յերգում ե, զվարճանում,

ՅԵՐԿԻ այդ վոտանավորը նրա սրտովն եր։

Մանկության հասակում Վաղիմիր Իլյիչն առանձնապես սի-
րելի գրքեր չուներ։ Հաճույքով կարդում եր «Մանկական Ընթեր-
ցանություն» ամսագիրը։ Կարդալուց հետո, նա քրոջ հետ վա-
զում եր խաղալու, և ինչպես արդեն ասվեց, ամենից շատ սիրում
եր աղմկոտ, շարժուն խաղեր։ Ամառը նրանք վազում եյին բակ
ու այգի, ծառերն եյին մաղլցում, և յերկու մեծերիս հետ խա-
զում եյին «սեվ փալտիկ» մանկական խաղը։ Վալոդյան շատ եր

սիրում այս խաղը, իսկ հետագայում՝ կրսկեա խաղը Զմեռը սահնակով սղում եր մեր բակում շինած ձյունե սարից, ձնագնդի յեր խաղում ընկերների հետ, իսկ ավելի ուշ ժամանակ սկսեց չմուշկ խաղար. Հիշում եմ ինչպես հասարակական սահարանում, վոր շինում եյին Սիմբիրսկում, նա և իր ավագ յեղբայր Սաշան չմշկում ելին բարձր սարերից, վորտեղից սարսափելի լեր սկզբում նույնիսկ սահնակներով սղալ, այնքան սեպաձեւ դիրք ունեյին այդ սարերը: Ակզրում, սարի վերին, ամենասեպ մասում կծկվում եյին, ապա աստիճանաբար շոկվելով, յերկար-յերկար սահում եյին դեպի ցած, արդեն վողջ հասակով կանդնած: Յես միայն նախանձով դիտում ելի նրանց, իսկ հետևել նրանց որինակին չեի վստահում: Յնկ իմ կարծիքով Վալոդյան ավելի հեշտ եր սահում, քան Սաշան. նա կարճահասակ եր, ամրակազմ ու թիկնեղ: Բայց չմշկին սկսեց Վալոդյան, ի հարկե ավելի ուշ, գիմնազիստ ժամանակ:

Ինչպես արդեն ասվեց, Վալոդյան շատ չարաճի տղա յեր, բայց նրա բնավորության լավ կողմը ճիշտ խոսելն եր. չարություն կաներ և միշտ կխոստովաներ: Այսպես, մեկ անգամ հինգ տարեկան հասակում նա կոտրում ե իր մեծ քրոջ քանոնը, վորը կես արշինանոց եր, բաժանված վերշոկների ու կես վերշոկների:¹ Քանոնը մեծ քույրը նոր եր նվեր ստացել: Մեկ ել Վալոդյան ներս ե վագում կոտրած քանոնը ձեռքին, քրոջն ասելու, վոր ինքն ե կոտրել, իսկ յերբ քույրը հարցրեց, թե այդ ինչպես ե պատահել, ասաց՝ «Ճնկիս վրա ջարդեցի», բարձրացնելով վորը և ցույց տալով, թե ինչպես ե այդ արել:

— Լավ ե, վոր նա վոչինչ չի անում գաղտադողի, — ասում եր մայրը:

Մի անգամ, սակայն, մայրիկը պատմեց, վոր այդպիսի հանցանը ել ե պատահել: Մայրիկը խոհանոցում խնձոր ե մաքրում խմորեղենի համար. խնձորի կեղեց կուտուկվում ե սեղանի վրա, Վալոդյան ալտեղ ե լինում և պտույտ-պատույտ ե անում շուրջըն ու խնդրում ե խնձորի կեղեց տա իրեն: Մայրն ասում ե, վոր

¹ Այս ժամանակակից յերկարության չափերը

կեղեց չեն ուտում: Այդ ժամանակ մեկը կանչում է մորը. յերբ նորից վերադառնում ե շարունակելու իր աշխատանքը, վալոդյան այլս խոհանոցում չի լինում: Նա նայում ե դեպի այդի և տեսնում, վոր Վալոդյան նստել ե այնտեղ, իսկ առջև, այդու սեղանի վրա մի կույտ խնձորի կեղեց ե լցված ու նա արագ-արագ խպչտում ե: Յերբ մայրն ամոթանք ե տալիս նրան, նա լաց ե լինում և ասում, վոր այլս այդպիսի բան չի անի:

— Յեվ իսկապես, — ասում եր մայրիկը, — նա այլս ծածուկ վոչինչ չեր վերցնում:

Մեկ ուրիշ անգամ, յերբ Վալոդյան 8 տարեկան եր, նա թագնում ե իր մի մեղքը: Հալըր մեծ յերեխաների հետ միասին, առաջին անգամ Վալոդյախն հետը կազան ե տանում, վորտեղից նրանք պիտի գնային կոկուշինո գյուղը, հորաքրոջ մոտ: Կազանում, հորաքրոջ տանը, իր հարազատ քույրերի ու յեղբայրների և հորաքրոջ յերեխաների հետ խաղալու ժամանակ անզուշաբար դիպչում ե փոքրիկ սեղանին, վորի վրա յեղած ապակե ջրամանը վայր ե ընկնում և ջարդ ու փշուր լինում: Ներս ե մտնում հորաքրուրն ու հարցնում ե.

— Ո՞վ ջարդեց ջրամանը, յերեխաներ:

— Յես չեմ արել, յես չեմ արել — Վալոդյան ասում ե նրանցից ամեն մեկը:

— Յես չեմ արել — ասաց նաև Վալոդյան: Նա վախեցավ խոստովանվել — դեռ նոր ծանոթացած հորաքրոջը, ուրիշի տանը. նրա համար, մեզանից ամենափոքրի համար, դժվար եր «յես եմ» ասել այն ժամանակ, յերբ մնացած բոլորը հեշտությամբ «յես չեմ» ե յին ասում: Այդպիսով դուրս յեկավ, վոր ջրամանն ինքն իրեն ե ջարդվել: Անցավ յերկու թե յերեք ամիս:



Վալոդի բնարչն իր ժույը Այլգա
Խմբնայի հետ 1874 թ.

Վալորյան վաղուց արդեն կոկոշկինոյից վերադարձել եր և նորից սպրում եր Սի քիրսկում։ Յեկ ահա մեկ անգամ յերեկոյան, յերբ յերեխաներն ու առկել ելին, մայրը ստուգելով յերեխաների մահճակալները, մոտեցավ Վալորյախ մահճակալին, նու հանկարծ լաց յեղավ։

— Յես Աննա հորաքըրջը խաբեցի, — ասաց նա, հեկեկալով, — յես ասացի, վոր յես չեմ կոտրել ջրամանը, այնինչ յես եմ կոտրել:

Մալը հանգստացնում ե նրան, ասելով, վոր կզբի Աննա հորաքրոջը և վոր հորաքույրը հավանական ե, նրան կների: Իսկ Վալորդան դրանով ցույց տվեց, վոր սուտ խոսելը նրա համար զզվելի յե, վոր, թեև նա սուտ եր խոսել, վախենալով հանցանքն ընդունել, սակայն նա չեր կարողանում հանգստահալ, մինչև վոր խոստովանվեց:

مکالمہ ایڈیشنز پر 1874ء

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Վալողյան ինը և կես տարեկան հասակում ընդունվեց գիմնա-
դիալի առաջին դասարանը։ Գիմնազիայի համար նրան լերկու ձմեռ
պատրաստեցին. սկզբում պարապում եր մեզ մոտիկ գտնվող
քաղաքային դպրոցի մի ուսուցիչ, իսկ հետո՝ ուսուցչուհի։ Ուսուց-
չուհին շատ լավ դասատու յեր համարվում։ Վալողյան գնում եղ
ուսուցչուհու մոտ որեկան մեկ, յերբեմն ել յերկու ժամ կամ դա-
սերն սկսվելուց առաջ, 8—9-ը և կամ ուսուցչուհու ազատ ժամերին
սովորաբար ժամը 9—10-ը, յերբ դպրոցում կրօնի ձեռագործի կամ
նկարչության դասեր եյին լինում։ Մանուկ հասակից լինելով չափա-
զանց աշխատյժ, նա ուղղակի թռչելով եր գնում դասի։ Հիշում եմ
աշնան մի ցուրտ առավոտ մայրիկն ուզում եր նրա վերարկուն
հազցնել, բայց հազիվ եր տեղից վեր կացել, վոր վարդյան արդեն
չկար։ Դուրս նայեց հետեւից, վոր յետ կանչի, բայց նա արդեն
թեքվում եր փողոցի անկյունը։

Նասով ուղարկելու մեջ հեղտությամբ ու հաճույքով և չափազանց քննդունակ եր, հայրն ել նրան՝ ինչպես մեծ յեղբարն ու քրոջը, սովորեցնում եր տոկունություն և հանձնարարությունների ճշկրիտ և ուշադիր կատարում։ Դեռ հիշում եմ, վոր ուսուցիչներն ասում եին, թե Վարդյախն շատ և ոգնում այն, վոր նա դասարանում միշտ ուշադիր բառմ ե գասի բայցարությունը։ Իր հրաշալի ընդունակությունների շնորհիվ նա սովորաբար դասարանում արդեն հիշում եր արված նոր գասը, և նրան մնում եր միայն առաջը մի քիչ կրկնելը։ Դրա համար ել, լերը իջնում եր յերեկոն, մենք, մեծահասակներս մեր աշխատանքներն առած աեղավորվում եինք սեղանատան մեծ սեղանի շուրջը, ընդհանուր լույսի տակ պարապելու։ Պարզվում եր, վոր Վա-

լոդյան արդեն իր դասերը սերտելե և շատախոսում ե, աղմկում, փոքրերին մասխարս յե զցում և խանգարում ե մեզ: Իսկ բարձր դասարաններում, այն տարիներում, շատ դպս եյին տալիս: «Վալոդյա, դադարիր, «մայրիկ, վալոդյան խանգարում ե մեզ պարապել», ասում ելինք մենք: Բայց Վալոդյան ձանձրանում եր հանդիսա



Ուսամովների ընտանեկան խմբանկարը Ակարված 1879 թ.

նստելոց և սկսում եր խաղալ ու չարութլուն աներ Յերբեմն մալրը փոքրերին հավաքում եր դահլիճում, փորտեղ դաշնամուրի նվազակցությամբ նրանք մատկական յերգեր եյին լերգում: Վալոդյան սիրում եր յերգեր: Նա լավ լսողութլուն և յերաժշտական ընդունակություն սւներ: Բայց այստեղ ել նա հաճախ չեր հանդարտում: Փոքրիկ

յեղբայրը, Միտյան Յ-Յ տարեկան հասակում շատ բարեսիրտ տղայեր և առանց արցունքի մինչեւ վերջ չեր կարող յերգել «Պառավի Այծիկը» յերգը: Նրան աշխատում եյին վարժեցնել, համոզում եյին: Բայց հենց վոր նա սիրում եր անում աշխատելով արիաբար յերգել բոլոր տխուր տողերը, վալոդյան սարսափելի գենք շինելով, դառնում եր նրա կողմը և հատուկ շեշտով յերգում «Գայ-լե-րը հարձակ-վեցին այ-ծի-կի վրա»: Միտյան լարում եր բոլոր ուժերը աշխատելով զսպել իրեն: Բայց չարաճին չեր հանդստանում ու ավելի վողբերդական տեսքով, յեղբորը փորձելու համար յերգում եր «Պառավիին բողեցին պո-չըն ու Տո-սիկ-նե-րըն» մինչեւ վոր փոքրիկն այլևս չկարողանալով զսպել, աղի արցունք եր թափում: Հիշում եմ, վոր յես Վալոդյաի հետ կովում ելի, զայրանալով, վոր նա փոքրիկին գրգռում ե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼՈՒԽԵ

Յերբ հայրիկը տանն եր լինում, նա մեղ ոգնության եր համում,
վալոդյախն տանում եր իր առանձնասենակը և ստուգում եր դասերը:
Բայց սովորաբար վալոդյան բոլոր դասերն իմանում եր: Այս ժամա-
նակ հայրիկն սկսում եր հին լատինական բառեր հարցնել տեսրից:
Վալոդյան պատասխանում եր առանց դժվարության: Յեկ յեթե
հայրիկն ազատ չեր լինում նրան զբաղեցնելու ուրիշ բանով,
ինչպես որինակ շախմատով, այն ժամանակ սեղանատան լուսթունը
յերկար չեր տեսում:

Իսկ մեր հայրը շախմատ սիրում եր, և այդ սերն անցել եք
բոլոր յեղայրներին: Նրանցից ամեն մեկի համար մեծ ուրախու-
թլուն եր, յերբ հայրիկը նրանց կանչում եր իր առանձնասենյակը
շախմատ խաղալու: Այն շախմատը, վոր հայրիկը պահպանում եր մեծ
խնամքով և վորով մենք բոլորս մեր մանկական հասակում հիմնում
եյինք, ինքն եր շինել դեռ Նիժնի Նովգորոդում փականադործի
մոտ, նախքան նրա Սիմբիրսկ տեղափոխվելը: Մենք բոլորս խաղաէ
սովորել ենք այդ շախմատի վրա և ավելի ուշ ժամանակ, յերբ
Վլադիմիր Իլյիչն ապրում ե ըարտասահմանում, վորպես Եմիգրանտ,
մայրիկն այդ շախմատն ուղարկեց նրան: Բայց Կրակովում ուր իցիչը
բանտարկվեց համաշխարհային պատերազմի սկզբում և վորտեղից
ազատվելուց հետո հարկադրված եր հեռանալ, թողնելով բոլոր իրե-
րը, դժբաղդաբար այդ շախմատը նույնպես մնում է ու կորչում:

Վալոդյան շախմատ խաղում եր հալրիկի և Սաշալի հետ։ Մենք, աղջիկներս ափելի քիչ ելինք խաղում։ Հիշում եմ միայն մի աշուն, յերբ մենք բոլորս՝ հայրս և մենք յերեք մեծահասակներս՝ շատ ելինք տարվել չորս հօգով խաղացվող խաղով և յերեկոները նստում

Եյինք յերկար, մինչև ուշ գիշեր։ Բայց յերբ կանոնավոր պարագ-
յունքներն սկսվեցին, ինարկե ստիպված յեղանք թողնել ալր խա-
ղը վորը սովորաբար յերկար եք ձգձգվում։

Վալոդյան, վոր ամեն բանի լուրջ եր վերսբերգում, շախմատ խաղը նույնպես, ինչպես և մեծ յեղբայրը, սկսեց ուսումնասիրել ձեռնարկներով և հետազայտում շատ լավ եր խաղում։ Այս խաղը վեղեցկացնում եր նրա կյանքը գլուղում, զավառակում, իսկ հետո նաև աքսորավայրերում ու եմիգրացիայում, վորաեղ հաճախ հարկադրված եր լինում ապրել։ Իսկ զիմուղիսա ժամանակ նա շատ եր սիրում Սաշայի հետ շախմատ խաղար Վալոդյան փոչ միայն սիրում եր շախմատ խաղալ, այլ և սիրում եր այն բոլոր խաղերը, վորոնք խաղում եր Սաշան, սիրում եր անել այն ամենը, ինչ անում եր Սաշան։ Նա շատ եր սիրում իր մեծ յեղբորը և աշխատում եր ամեն բանով նրան նմանվել, նույնիսկ ամենաչնչին բաներում։ Ինչի մտսին ել վոր հարցնում ելին Վալոդյաին, թե նա ինչպես է ցանկանում խաղալ, կգնա արդյոք զբունելու, լուղթի թե կաթով կաշալե ուզում ուտել — նա իսկույն պատասխան չեր տալիս, ալ նայում եր Սաշային։ Իսկ նա դիամամբ ուշացնում եր պատասխանը, խորամանկությամբ նայելով յեղբորը։ Ցեվ մենք երկուսով ծիծաղում ելինք նրա վրա, բայց ծաղրելն ել Վալոդյաին յետ չեր վարժեցնում և նա պատասխանում եր՝ «ինչպես Սաշան»։ Քանի վոր Սաշան բացառիկ լուրջ, խորասուզող և իր պարտականություններին իստ վերաբերվող աղա լիք, ապա նրան նմանվելը շատ ուժակաք եր Վալոդյաի համար։ Նա միշտ իր առաջ տեսնում եր կենարոնացած լինելու, առաջադրությունների ճիշտ և ուշադիր կատարելու և մեծ աշխատունակության որինակ։

Յես գտնում եմ, վոր իր շատ սիրելի յեղայր Սաշայի որինակը
Վայողլախի համար հսկայական նշանակություն ուներ: Յեվ վոչ
միայն աշխատանքի հանդեպ, այլ և մարդկանց հանդեպ ունեցած
վերաբերմունքով Սաշան որինակ եր հանդիսանում մեզ բոլորիս հա-
մար, իր զգալուն, սիրալիր միևնույն ժամանակ ճշկրիս և հաստատուն
բնափորության շնորհիվ, մենք բոլորս սիրում երինք նրան բացա-
ռիկ սիրեմ: Վայողլախ մանկությունից շատ տաքարյուն եր և

Սաշայի մշտապես հանդարտ ու մեծ տոկունության որինակը, բոլոր յերեխաների և նույն թվում նամանավանդ Վալոդյանի համար չափազանց խոշոր նշանակություն ունի ։ Ակզեռում Վալոդյան նմանվելով մեծ յեղբորը, հետագայում արդեն գիտակցորեն սկսեց պայքարել իր այդ պակասության դեմ և ավելի հասունացած տարիներում մենք նրա մեջ համարվա տաքարյունություն չեցինք նկատում։ Նման պալքար և աշխատանք նրա մեջ մենք տեսնում ենք նաև իր աշխատունակությունը զարգացնելու խնդրում։ Թեպետ և մենք ասացինք, վոր նա ուշադիր վերաբերմունք եր ունենում առաջադրությունները կատարելուն և սովորում եր հիանալի, բայց նրա նշանավոր ընդունակությունների շնորհիվ այդ բանն այնուամենայնիվ նրա համար համարյա վոչ մի դժվարություն չեր ներկայացնում, ուստի և հարկ չեր լինում լարվածության, իր մեջ աշխատունակություն զարգացնելու։

Չափազանց գիտակցորեն և խիստ վերաբերվելով ինքն իրեն դեպի իր վողջ շրջապատը, Վալոդյան ինքը նկատեց այդ պակասությունն իր մեջ և մի անգամ ունկնդրելով իր Ոլլա քրոջ դաշնամուրի կատարած անվերջ, խիստ համբերատար վարժություններին, ասաց ինձ։ — «Ահա թե ում աշխատունակությանը կարելի չե նախանձել»։ Յեվ սկսեց իր մեջ մշակել աշխատունակություն, վորը նրա յերիտասարդ տարիներում՝ համարսարանն ավարտելու տարիներում, արդեն նշանավոր եր և վորի վրա մենք ուղղակի զարմանում ելինք յերբ նա արդեն մեծ մարդ դարձավ։

Ընդհանրապես դեռ յերեխայական աարիսերում յես Վալոդյան մեջ նկատում եյի շրջապատին քննադատորեն վերաբերվելու ընդունակություն։ Այդ աշխատկ, չարաճճի, ըստ յերեսութին թեթեամիտ տղան, վորը հեշտությամբ նկատում եր ուրիշների ծիծաղելի, թույլ կողմերը, վորը դեմ չեր զրդուել, ծաղրել ուրիշներին, իսկապես այդ չեր միայն, վոր նկատում եր։ Նա նկատում եր, ինչպես ցուց տրվեց Ոլիայի որինակով, նաև լավ կողմերը և անպայման այնպես, վորպեսզի հաշիվ տա իրեն, արդիոք այդպես է վարվում ինքը, չկա արդյոք ուրիշի վարմունքի մեջ վորեն այնպիսի կողմ, վորից ինքն ել կարողանա մի բան վերցնել։

Իմ կարծիքով այդ հատկությունը վարոդյան ուժեղ կողմերից մեկն եր։ Իմ հիշողության մեջ մնացել ե մի յերկու դեպք, վորոնց առթիվ նա ասում եր՝ «Յես մտածում ելի, արդիոք այդքան արի-ություն կունենա՞լի այդ անելու։ Թերեմս վոչ»։

Մանուկ հասակաւմ նրան խորթ ելին պարծենկոտությունը, յերեակալելը՝ այդ անհաճո հատկությունները, վորոնց նա ավելի ուշ տարբիներում տանել չեր կարողանում, և վորոնցից նա զգուշցցնում եր յերիտասարդությանը կոմսոմոլի III համագումարում արտասանած իր ճառում։ Ճշմարիտ ե, մեր հայրը նույնպես ամենեին չեր սիրում պարծենկոտությունը և, չնայած մեր բոլորիս և մանավանդ Վալոդյայի մշտական հառաջադիմությանը գլորոցում, վոչ մեկիս չեր գովարանում, այլ ուրախանալով մեր հառաջադիմությունների համար, աշխատում եր մեզ ավելի մեծ հառաջադիմությունների խրախուսել։



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գիմնազիալից վերադառնալով, Վալոգյան հորը պատմում եր այն մասին, թե ինչ դասեր են ավել ինչ են իրեն հարցը ել և ինչպես ե ինքը պատասխանել: Քանի վոր միշտ նույնն եր կը կըն-փում՝ հաջող պատասխաններ, լավ թվանշաններ, ուստի Վալոգյան յերբեմն հոր առանձնասենյակի մոտով անցնելով դեպի իր սենյակը տանող միջանցքով, ուղղակի արագ-արագ, քայլելով գեկուցում եր. «ՀԱՅՆԱՐԵՆԻՑ — հինգ, գերմաներենից — հինգ»: Այնքան պարզ ե այդ սրատկերն իմ աչքերի առաջ. յես նույնպես գտնվում եմ հորս առանձնասենյակում և վորում եմ բավականության այն ժամանակում նաև հայրս, աչքերով հետեւլով ժամանական մոտով թափով անցնող գիմնազիատի շինել հագած թիկնադրան, գլխարկի տակից ցցված շեկ մազերով կերպարանքին: Առարկաներն, ինարկե, փոփոխվում են. յերբեմն հնչում եր՝ «Լատիներենից — հինգ, հանրահաշվից — հինգ», բայց ելությունը միհնույնն եր, սովորաբար մեկ թվանշան եր ստացվում — 5:

Այն տարիներում հայրս ասում եր մորս, վոր Վալոգյանին չափազանց հեշտությամբ և հաջողվում ամեն ինչ և վոր վախենում ե, թե նրա մեջ աշխատունակություն չի մշակվի: Բայց հիմա մենք գիտենք, վոր այդ վախն ավելորդ եր, վոր Վալոգյան կարողացավ իր մեջ չափազանց մեծ, արտակարդ աշխատունակություն գարգացնել:

Բայց և սիրում եր զրգուել ու ծիծաղել ուրիշների վրա: Յերբ հավաքվում ելին նրա հասակակիցները կամ ընտանիքի փոքրերի (Ռլահի և Միտիալի) հետ, նա բոլոր խաղերի պարագլուխն եր: Ամեն որ լսվում եր նրա ծիծաղը և անսպառ եր կատակների,

պատմությունների պաշարը: Քաղաքային դպրոցի ուսուցչունիք վերա Վասիլեվնա Կաշկադամովան, վորը մոտ ծանոթ եր մեր ընաւանիքին, պատմում ե իր ճիշողություններում, թե ինչպիսի ուրախ տրամադրություն եր իշխում մեր տանը սովորաբար, իերեցերեկոյան ամբողջ ընաւանիքը հավաքվում եր թերի սեղանի շուրջ: «Յեկ բոլորից բարձր, — ասում ե նա, — լսվում եր Վալոգյան



Վարդան Վալոգյան

և նրա յերկրորդ քրոջ՝ Ալիաի ձաւնը: Անընդհատ հնչում եր նըրանց հնչուն ձաւնը և վարակիչ ծիծաղը»: Նրանք պատմում ելին գիմնազիայում տեղի ունեցած զանազան պատահարների, զանազան կատակների, չարությունների, արարքների մասին: Հայրս ել դեմ չեր մեզ հետ զրուց անելու և, թողնելով իր լուրջ գործերը պատ-

մում եր իր գիմազիական տարիների, իր ընկերների հետ պատահած զանազան դեպքերի մասին, զանազան կատակներ ու անելուտներ դպրոցական կյանքից «Բոլորը ծիծաղում են, բոլորն ուրախ են: Յեզ մարդ իրեն լավ ե զգում այդ համերաշխ ընտանիքում», գրում ե կաշկադամովան:

Վալորյան մի քանի չարությունները մնացել են իմ հիշողության մեջ: Այսպես, մեզ մոտ յեկտվ հորաքրոջ աղջիկը, վորը բժշկուհի յեր: Այն ժամանակ կին բժշկուհիները հազվագյուտ եյին: Այդ իմ հորաքրոջ աղջիկն առաջիններից մեկն եր: Նստած դահլիճում, խոսում են հայրիկի ու մայրիկի հետ: Դահլիճի դռան մոտ ծիծաղ և փափոց ե լավում: Ներս ե վաղում Վալորյան, համարձակ դիմում ե հյուրին:

— Անյուտա, յես հիվանդ եմ, — բժշկիր ինձ:

— Ինչով ես հիվանդ, — ներողամտաբար հարցնում ե յերիտասարդ բժշկուհին, տեսնելով, վոր փոքրիկը չարաճճիություն ե անում:

— Վոչ մի կերպ չեմ կարողանում կշտանալ, ինչքան ել ուտում եմ, ելի սոված եմ ու սոված:

— Գնա խոհանոց մի մեծ կտոր հաց վերցրու, լավ աղ ցանիր վրան ու կեր:

— Յես արդեն փորձել եմ, — չի ոգնում:

— Ուրեմն կրկնիր այդ գեղը մի քանի անգամ, յերեկի կ'ոգնիր Վալորյախին մնում եր նահանջեր

Վալորյան սիրում եր նաև յերաժշտություն: Մայրիկը նրան ցույց տվեց սկզբնական վարժությունները, տվեց նվազելու մի քանի պարզ մանկական լերգեր ու պիեսներ և նա սկսեց նվագել մեծ աշխուժությամբ և արտահարտությամբ: Մայրիկը վերջում ափսոսաց, վոր նա թողեց յերաժշտությունը, վորովհետեւ նա մեծ ընդունակություններ եր ցույց տալիս:

Փոքրիկ Վալորյան սիրում եր թոշուններ վորսար ընկերների հետ թակարդներ եր դնում, իսկ ավելի վաղ հասակում սիրում եր թոշուններ գնել և բաց թողնել նրանց ազատ ողում թոշելու չնումը սովորություն կար ավետան տոնին՝ մարտի 25-ին՝ թոշուններ բաց թողնել ազատ ողում, և Վալորյան սիրում եր այդ

սովորությունը և մորից փող եր խնդրում, վորպեսզի թոշուն գնի և հետո բաց թողնի: Հիշում եմ, միանգամ նա կարմրապահն մի թոշունուններ վանդակում: Զգիտեմ, ինքն եր բոներ փողով եր առեր, թե վորեւ մեկը նվիրել եր նրան, հիշում եմ միայն, վոր թոշունը շատ շապրեց, ամրեց, թոշնեց ու սատկեց: Զգիտեմ թե ինչից արդպես լեզավ, մեղավիր եր արդիոք Վալորյան, վոր մոռանում եր թոշունին ժամանակին կերպակել, թե վոչ: Հիշում եմ միայն, վոր մեկը նաստում եր նրան ալդ բանում և հիշում եմ վալորդյանի լուրջ կենուրոնացած հայացքը, վորով նա նայում եր սատկած թոշունին և ապա ասաց վճռական՝ «Այս յերբեք վանդակում թոշուն չեմ պահի»:

Յեվ իսկապես, այլևս նա վանդակում թոշուն չեր պահում:

Յերբեմն նա կարթով ձուկ վորսալու յեր դնում Սիմբիրսկում լեղած Սվիաղա զետակում: Նրա ընկերներից մեկը պատմում է հետեւյալ գեղքը: Յերեխաններից մեկն առաջարկում ե ձուկ վորսալու գնալ մոտակա ջրով լցված մեծ առվում, ասելով վոր այնտեղ ձուկ շատ կա: Նրանք գնում են, բայց Վալորյան կռանալով ջրի վրա, ընկնում ե առուն. սկսում ե թաղվել տիղմի մեջ: «Հզիտեմ, թե ինչ կլիներ, — պատմում ե այդ ընկերը, — յեթե մեր աղմուկի վրա գետի ափին գտնվող գործարանից վազ չտար մի բանվոր ու դուրս չհաներ Վալորյախին: Այդ գեղքից հետո մեզ թույլ չեյին տալիս գետը գնալ»: Զնայած փոքր հասակում զբաղվում եր ձուկ և թոշուններ վորսալով, բայց Վալորյան չտարվեց դրանով և գիմնայիացի բարձր դասարաններում նա վոչ մեկով և վոչ ել մյուսով չեր զբաղվում: Նույնիսկ յերբ նա համալսարանից Սաշայի հետ տուն եր վերադառնում ամառային արձակուրդներին, Վալորյան սովորաբար նավակով չեր զբոսնում: Սովորաբար Սաշայի հետ գնում եր Միտյան, վորը շատ եր սիրում ուղեցել Սաշային, յերբ նա շրջում եր Ավիյագա գետի վրա, դանազան միջատներ և ուրիշ ջրային կենդանիներ և բույսեր վորսալու: Սաշան զբաղվում եր բնական գիտություններով զեռ գիմնազիատ յեղած ժամանակ, իսկ համալսարանում ընդունվեց բնագիտական ֆակուլտետ և ամառային արձակուրդին զբաղվում եր հետազոտություններով—նյութեր եր պատրաստում իր շարադրությունների համար:

իսկ Վալոդյան բնական գիտություններ չեր սիրում։ Գիմնազիայում նա հետաքրքրվում եր լատիներենով, կլասիկներին կարդալով, աշխարհագրությամբ։ սիրում եր շարադրություններ գրել և շատ հաջող շարադրություններ եր գրում։ Նա շարադրություններ գրելիս չեր սահմանափակվում դասագրքերով և ուսուցչի պատմածներով, այլ գրքեր եր վերցնում գրադարանից և նրա շարադրությունները ստացվում եյին հանդամանորեն, թեման շատ լավ ծագակած եր լինում և լավ գրական լեզվով։ Գիմնազիայի վերատեսուչը, վորը բարձր խճբերում լեզվաբանություն եր ավանդում Վալոդյային շատ եր սիրում, շարունակ գովում եր նրա աշխատանքները և ամենալավ թվանշանն եր դնում։

Վալոդյան չեր սիրում նաև զանազան այնպիսի աշխատանքներ, վորոնցով սովորաբար տարվում են յերեխանները։ Այսինքն նա մանուկ հասակում թղթերից խաղալիքներ և զարդեր եր կտրում ու կպցնում տոնածառի համար, վորը մենք բոլորս ել շատ եյինք սիրում և վորի համար մենք ամեն ինչ մեր ձեռքով եյինք պատրաստում։ Բայց բացի այս սկզբնական աշխատանքներից յես չեմ հիշում, վոր Վալոդյան պարապեր վորեե ուրիշ արհեստով՝ — հյուսնությամբ կամ այլ գործով։ Չեր դրադվում նմանապես յերեխանների համար սիրելի այնպիսի աշխատանքով, ինչպիսին ե փայտից զանազան ձեեր սղոցել, վորի մեջ մեծ վարպետ եր նրա մեծ իեղբայրը, Դպրոցական պարապմունքներից աղատ ձմեռային և ամառային արձակուրդներին, նա կամ կարդում եր, վորի ժամանակ հիշում եմ, սիրում եր արեածաղիկ չըթել, կամ վազվում եր, զբունում, ձմեռը չմուշկ եր խաղում, իսկ ամառը խաղում եր կրոկետ կամ լողանում եր։ Նա չեր սիրում կարդալ արկածներ, այլ հիշում եմ, տարվում եր Գոգոլով, իսկ ավելի ուշ՝ Տուրգենեվով, վորի գրվածքները կարող եր կարդալ ու վերակարդալ մի քանի անգամ։ Գիմնազիական տարիներում նա առանձնապես մոտիկ ընկերներ չուներ, ինչպես Սաշան և Ոլյան ունեյին, նրա ընկերներից մեք տուն քչերն եյին գալիս, բայց դասարանում նրա հարաբերությունները լավ ելին։ Նա ոգնում եր ընկերներին աշխատանքների ժամանակ, բացարձում եր անհասկանալին, ուղղում եր թարգմանությունները

կամ շարադրությունները, յերբեմն նույնիսկ դժվարացնող ընկերների համար ինքն եր գրում։ Նա ինձ պատմում եր, վոր նրան հետաքրքրում եր շարադրություններն այնպես գրել, վորպեսզի ընկերը լավ թվանշան ստանա և վոր չիմանային, վոր ուրիշն ե գրել նրա համար, և մանավանդ, վոր ինքը Վալոդյան ե գրել Անհասկանալի բաները նա բացատրում եր ընկերներին դասամիջոցներին, իր լեղբայր Սաշայի նման յերբեմն կես ժամ շուտ եր գնում գաղուց, վորպեսզի ընկերների համար թարգմաներ հունարենի կամ լատիներենի դժվար հասկանալի տեղերը, կամ բացատրի դժվար թեորեման։ Ամբողջ զասարանը հույսը դնում եր Վալոդյաի վրա։ Նա ինքն տուաջ գնալով, իր հետ առաջ եր տանում նաև ուրիշներին։

զմբեղ բացադրիք բայց ու անպահ, դրվագ կայութեալոց նորի
ըստ ուրի ու ու ենթակա են ու առող ու մասն զանա պատ
պատճեան շաբա սերմա պատճեան կայութեալոց ու ու ենթակա ու
ու մասն ուրի օպատակա ուրի ու առող պատճեան բայց ուրի

ՎԵՏՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ակզբի տարիներում մեր ընտանիքը Սիմբիրսկում քոչում եր շատ թե քիչ անհարմար բնակարաններ, մինչև վոր հայրիկը Մասկովսկի փողոցի վրա մի փայտաշեն տուն գնեց։ Այժմ այդ տան մեջ կազմակերպված ե լենինի անվան թանգարան, այսինքն ամբողջ տունը, բոլոր սենյակները, բոլոր կահ-կարասիները հնարավորության սահմաններում, վերականգնված են այնպես, ինչպես յեղել են նրանք լենինի մանկության ժամանակ։ Այդ տունը մի հարկանի է, վերեի կիսահարկով, ուր տեղավորված ելին յերեխաները։ Վալոդյափ սենյակը Սաշայի սենյակին կից եր, տան մի մասում, իսկ իմ և յերեք փոքրիկների սենյակը մյուս կողմն եր, առանձին աստիճաններով։ Մենք տեղափոխվեցինք այդ տունը, յերբ Վալոդյան 8 տարեկան եր և ազդպիսով ուսումնական հինգ տարին՝ մինչև 5-րդ դասարանը՝ նա շատ մոտ ե յեղել Սաշային, ընդորինակել ե նրանից լուրջ վերաբերմունք դեպի գործը, ներկայե յեղել Սաշայի բնագիտական փորձերին, ձգտել ե կարդալ այն գրքերը, գորոնք կարդում եր Սաշան և նրանից խորհուրդներ ե հարցը։

Տան յետեռում կար մի յերկար կանաչ բակ, վորտեղ մեզ համար մարմնամարդական սյուներ եցին սարքված. ապա բավիկականին մեծ պարտեղ՝ վորը տարածվում եր մինչև Պակրովսկի փողոցը:

Այժմ այդ այդին մեծ մասամբ կտրտված ե, իսկ Պակրով-սկի փողոցի վրա կառուցված ե ուրիշ քարե տուն։¹

¹ Ծանոթությունն Այդ տան այժմ տեղափոխված և յերկաթուղային գործառնային դպրոցը, վորբ 1931 թվից հաջում և լիւա նիկ. Ուշանովի անունով, իսկ այդ դպրոցի աշակերտաներն ու ախտանիները, վոր կցված են Հնինինի անվան թանգարանին, ձեռնարկել են այդու գիրականագուանը. (Ա. Ու.)

Այսպիսով նեղ ու յերկար այդ տեղը ձգվում եր մի ամբողջ թաղամաս։ Այզու ցանկապատի մեջ կար մի զոնակ և մենք այդ դռնակով դուրս եյինք դնում ձմեռը սղղալու, ամառը լողանալու Սվիյագա գետում։ Մենք մի մասնավոր լողարանի վճարում եյինք յերկու ժամվա վարձ՝ յերեկվա և իրիկվա համար և այդ ժամերին մեր ընտանիքը պետք է լողանար յերկու հերթի, նախ հայրս աղաների հետ, և ապա մայրիկը, աղջիկների հետ։ Հիշում եմ՝ ինչպես ընտանիքի յերկու խմբերը, հանդիպում եյին մի-մյանց կես ճանապարհին, Պակրովսկի փողոցից դեպի Սվիյագա ընթացող մեծ մասամբ խոտով ծածկված խաղող զառիթափում։

Այդին առավելապես պտղատու յեր. կային այնտեղ խնձորենիներ, բարենիներ և զանազան պտղատու թփեր. կար նույնպես գեղեցիկ ծաղկանոց: Այդ բոլորին հսկում եր մայրս, վորչատ եր սիրում այգեզործություն: Վարձու բանվորական ձեռքեր, բացի խնձորենիների տակը փորելու և այլ գարնանային և աշնանային դժվար աշխատանքների համար՝ չկային: Մենք բոլորս ոգնում եյինք: Հիշում եմ ամբան յերեկոները, տաք և չոր լեղանակներից հետո, հիշում եմ մեզ բոլորիս ցնցուղներով, դույլերով, կժերով ամեն տեսակի ամաններով, վորոնց մեջ լցնում ելինք հորից հանած ջուրը, և ճանապարհում այցու մարդերը ջրելու: Հիշում եմ ինչպես արագ յետ եր սլանում Վալորյան դատարկ ցնցուղով: Առատորեն պտուղներ և մրգեր եյինք ճաշակում մենք: Բայց այդ տեղի յեր ունենում վոչ թե անկարգ, այլ վորոշ կարգապահություն կար նաև այստեղ: Այսպես, մեզ թույլատրվում եր, յերբ խնձորը հասնում եր, ընտրել և ուտել միայն վայր ընկածները, իսկ ծառերի վրայից մենք չեյինք քաղում: Այնուհետև կար վորոշ կարգ, թե վոր ծառերից կարելի լի ուտել, մրգերի շուտ փչացող տեսակները, կամ վորոնք պետք ե հավաքել ձմռան համար մրգանուշ յեփելու: Այսպիսով մենք աշնան ամիսներին առատ-առատ ուտում եյինք և ամրող ձեռն ել բավականացնում եր մեզ:

Հեղում եմ, թե ինչպես մեզ բոլորիս զարձացրեց մեզ մոտ հյուր յեկած մի աղջիկ, վորք փորձեց ցույց տալ իր շնորհքը նրանով,

վոր վաղելով ծառի վրայի խնձորից կծեց և թափով առաջ անցավ: Այդպիսի սրիկայությունը մեղ համար խորթ եր և անհառկանալի: Ճիշտ նույն եր նաև հատապտուղների նկատմամբ, մեղ թույլատրված եր յելակների կամ մորենու մարդերում «արածել», ձեռք չտալով ավելի ուշ հասնող կամ մրգանուշի համար նախատեսնված պտուղներ: Հիշում եմ, թե ինչպես զարմանում եյին մեր ծանոթները, տեսնելով, տաղապարի մոտ, վոր յերեկոյան թեյ եյինք խմում, յերեք բարձր բալի ծառերն մնում եյին անձեռնմխելի, պտուղներով ծածկված, մինչև հուլիսի 20-ը (հայրիկի անվանակոչության որը): Յեկ չնայած այդ ծառերից քաղելը շատ հեշտ եր և միրգն առատ եր, բայց և այնպես յերեխաներից և վոչ մեկը ձեռ չեր տալիս:

— Յերխաները կարող են միրգ ուտել այդում մյուս մասում, իսկ այս ծառերին, խնդրել եմ ձեռք չտալ մինչև 20-ը, — ասաց մայրս:

Մեր մայրը կարողանում եր կարգապահությունը պահել, առանց անտեղի մեղ ճնշելու, տալով մեղ անչափ աղատություն, վոր յերբեք սահմանից չանցներ և ուրիշի աղատությունը չխախտվեր: Այդ հանգամանքը շատ մեծ նշանակություն ուներ մեր բոլորիս դաստիարակության համար: Այն խելացի կարգապահությունը, այն խնայողությունը, վորը հրապարակ եր բերում Վլադիմիր Իլիչն իր՝ անհատական կյանքում, վորը պահանջում եր իր բոլոր ընկերներից պետական շինարարության մեջ, նաև յուրացըել եր դեռ մանկությունից:

ՑՈԹ ԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1886 թվին, յերբ Վլադիմիր Իլյիչը 16 տարեկան եր, մեր յերջանիկ ընտանիքին առաջին ծանր հարվածը հասավ: Հունվարի 12-ին հանկարծակի մեռավ մեր հայրը, իլիա Նիկոլաևիչը: Այելքսանդր իլիչն այդ ժամանակ Պետերբուրգում եր: Վալոդյան հանդիսանում եր տան մեծ տղան և չնայած յերիտասարդ լինելուն, նա ցուցաբերեց մեծ հոգատարություն և ուշագրություն դեպի մեր մայրը: Չատ եր աշխատում ոգնել նրան իր նոր հոգսերի մեջ: Այդ ձմեռ յես ավելի յերկար մնացի Սիմբիրսկում, ուր գտնվում եյի ծննդյան արձակուրդի ժամանակ: Ինձ անհրաժեշտ եր կուրսեր ընդունվելու համար պատրաստվել լսութիներենից և Վալոդյան, վոր հիանալի կերպով տիրապետում եր այդ լեզվին, հանձն առավ ինձ ոգներ: Հիշում եմ, վորքան լավ եր բացատրում նա և ինչ աշխուժ ու հետաքրքիր եյին անցնում մեր դասերը: Նա այն ժամանակ ասում եր, վոր գիմնազիայի կուրսը բավականին յերկար է, վոր մեծ, գիտակից մարդն այդ ութ տարվա ձգձգված ուսուցումը կարող է յերկու տարում անցնել: Յեկ նա ապացուցեց այդ, յերկու տարում պատրաստելով գիմնազիայի եքսերն քննության՝ ուսուցիչ Ռգորոդնիկովին: Այդ ուսուցիչը չուվաշական ծագում ուներ և դասավանդում եր չուվաշական դպրոցում: Նա շատ մեծ ընդունակություն ուներ մաթեմատիկայից: Գիմնազիայի մաթեմատիկայի կուրսը նա անցել եր ինքնուրույն կերպով, ցանկանալով այդ առարկայով զբաղվել հետազարում ես: Բայց համալսարան ընդունվելու համար հարկավոր եր գիմնազիայի վերջնական քննություն տալ բոլոր առարկաներից և հին լեզուներից: Ի հարկե չուվաշի համար, վորը վատ գիտեր ուսուերեն լեզուն, այնքան ել հեշտ չեր,

մանավանդ, վոր նա առանձին ընդունակություն չուներ գեղի լեզուները և հաստարակական գիտելիքները Բայց և այնպես Վալոդյան մեր ընտանիքի մոտիկ բարեկամ, չուվաշական դպրոցի տեսուչ Յակովլեվի առաջարկությամբ հանձն առավ պարապել Ոգորդողնիկովի հետ, վերապատրաստեց իր աշակերտին $1\frac{1}{2}$ —2 տարում, չնայած վերջին յերկու դասարաններում իր ունեցած սեփական պարապմունքներին: Յեվ Ոգորդնիկովը Վալոդյան հետ միասին նույն տարում վերջնական քննություն տվեց: Պետք է ավելացնել և այն, վոր Վալոդյան ձրի յեր պարապում, քանի վոր իր աշակերտը վոչ մի միջոց չուներ:

1887 թվին, յերբ Վալոդյան վերջին դասարանումն եր, մեր ընտանիքին հասավ մեկ ուրիշ ծանր դժբախտություն. Ալեքսանդր III թագավորի վրա կատարած մահափորձին մասնակցելու համար Պետերբուրգում բանտարկվեց Ալեքսանդր Իլյիչը: Վլադիմիր Իլյիչին վիճակվեց առաջինը լսել այդ ծանր լուրը և մորը նախապատրաստել այդ մասին: Ահա ինչպես պատահեց այդ: Ալեքսանդր Իլյիչի և իմ այս տողերը գրող նրա քրոջ բանտարկության մասին մեր բարեկամունիքն հաղորդել եր վերոհիշյալ Կաշկադամովային, խնդրելով նախապատրաստել մայրիկին: «Ստանալով նամակը, — պատմում ե Կաշկադամովան, — յես ուղարկեցի գիմնազիա Վալոդյանի հետեւից և ավել նրան նամակը կարդալու: Նրա ունքերը խոժոռ կիսվեցին և նա յերկար, լուռ կենարոնացած եր նամակի վրա: Իմ աչքի առաջ արդեն նախկին ուրախ, անհոգ տղան չեր, այ, հասակ առած մարդ: «Գործը լուրջ ե, կարող ե վատ վախճան ունենալ Սաշալի համար, — ասաց նա»:

Ավելի ուշ ժամանակ, յերբ մարիկը մեկնում ե Պետերբուրգ իր ավագ զավակների ազատման համար միջամտելու, Վալոդյան, Կաշկադամովի տսելով. հաճախ ասում եր. «Եղանակում ե, Սաշան այլ կերպ չեր կարող վարվել, նշանակում ե նա այդպես պետք ե վարվեր»: Վալոդյան այդ դժբաղդությունը կրում եր մեծ արիությամբ, շարունակելով ուշադիր պարապել, բայց դարձավ ավելի լուրջ ու լուակյաց ե, միան փոքր քույրերի ու յեղբօր մոտ զալիս աշխատում եր նրանց ուրախացնել և շատախոսում եր ու կատակում

առաջիկա նման, նրանց քերուսներ և հանելուկներ առաջարկում: Իսկապես Ալեքսանդր Իլյիչի դորձը շատ լուրջ վերջավորություն ունեցավ: Նա ճանաչվեց մահափորձ կատարելու գլխավոր ղեկավարներից մեկը, դատապարտվեց մահվան: Դատավճիռը գործադրությունը 1887 թվի մայիսի 8-ին:



Ալեքսանդր Իլյիչ Շիշանով
1878 թ.


Միմբիրսկի գիմնազիայի վարչությանը նկատողություն արվեց նրա համար, վոր նա լավ վկայական և վոսկե մեղալ եր տվել «սոսկալի հանցագործին»: Մտածում եյին, վոր վոսկե մեղալ չի կարելի տալ և նրա յեղբալը Վլադիմիր Իլյիչին, բայց վերջինի առաջադիմությունը գիմնազիայի ուսման ութ տարվա ընթացքում այնքան աչքի յեր ընկնում, ավարտական քննությունն այնքան փայլուն եր, վոր չեր կարելի զրկել նրան, ինչպես նաև՝ նրա քույր Ռյահին, վոսկե մեղալից: Նա ստացավ այդ մեղալը և մտավ

Կազանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Մալլս վաճառելով Սիմբիրսկում յեղած տունը, և ավելորդ գույքը, մյուս յերեխաների հետ նույնպես փոխադրվեց Կազան։ Բայց այն ճնշումը, վորին առանց այն ել յենթակա յեր ուսանողությունը 80-ական թվականներին, առավել խստացավ 1887 թվականի մարտի 1-ի մահափոքից հետո, վորի մասնակիցներն ելին իսկական ուսանողները։ «Ուսանողների վերատեսուչներ» ելին նշանակվում վաստիկանական շներ, փակվեցին ամենաանմեղ ուսանողական ընկերությունները, լուծվեցին բոլոր կազմակերպությունները, բանտարկվեցին և արձակվեցին շատերը։ Բոլոր համալսարաններում ուսանողներն սկսեցին բողոքել Ուսանողական, այսպես ասած, անկարգություններ տեղի ունեցան նաև Կազանի համալսարանում։ Վլադիմիր Իլյիչը նույնպես մասնակցեց առանց թույլատվության գումարված ժողովին և մյուսների թվում արձակվեց համալսարանից և Կազանից աքսորվեց Կոկոշկինո դյուզը։ Այս հեռացումով նրա համար վերջացան աշակերտական տարիները։ Բարձրագույն դրաբանների դռները փակվեցին նրա համար։ Նրա հարուցած միջնորդությունը կը կին համալսարան ընդունվելու մասին, մերժվեց գլխավորապես այն պատճառով, վոր նա Ալեքսանդր Իլյիչի յեղբայրն եր։

Այսպիսով գպրոցական ուսումը վլադիմիր Իլյիչի համար վերջացավ 17 տարեկան հասակում։ Բայց նա այնքան դիտակից եր, վոր առանց կողմնակի ոգնության, վերջացրեց իր կրթությունը։ Նա վերջացրեց պաշտոնական կրթությունը, յերբ վերջապես նրան իրավունք տրվեց իրավաբանական ֆակուլտետի ավարտական քննություն տալ, և քննությունը նա տվեց իր շրջանավարտների հետ միջնուն տարում, վորպես թե համալսարանից հեռացված չեր յեղել։ Հիշում եմ, շատերը զարմանում ելին, վոր նա վոչ մի տարի չկորցրեց, վոր իրապես համալսարանական բոլոր առարկաներից պատրաստվեց վոչ թե չորս տարում, ինչպես բոլորը, այլ յերկու տարում։ Համալսարանից ստացած դիպլոմը, նրան տալիս եր մասնագիտություն (նա զրվեց իբրվալ հավատարմատարի ոգնական), ուրեմն, հնարավորություն եր տալիս հաց վաստակեր

ինչի մասին հարկավոր եր մտածել, վորովհետև ամբողջ ընտանիքն ապրում եր, միայն մորս կենսաթոշակով և նրանով, ինչ վոր դեռ մնացել եր հորս մահից հետո։

Բայց նա զավառում նախ կազանում, ապա Սամարայում ապրած տարիներում ավարտեց նաև իր հեղափոխականի կրթությունը։ Նախ իր ճանապարհը զտավ հեղափոխական Մաքսիզմի, բանվոր դասակարգի պարագարի զաղափարի մեջ։ Ամեն բան հիմնավոր ճշկրիտ ուսումնականի վերաբերություն իր սովորության համաձայն, նա այդպես ուսումնականից նաև Մաքսիզմը։ Նա սերտեց Մաքսի և ենգելսի բոլոր զրվածքները. շատ բան դեռ այն ժամանակ ուսերեն թարգմանված չկար և նա կարդդում եր նրանց զրվածքները Փրանսերն կամ գերմաներն լեզուներով։ Նա իր սովորության համաձայն ձեռք բերած դիտությունը բաժանում եր յերիտասարդ խմբակի հետ, վոր ստար լեզուներով չեր կարողանում կարդալ Նա սկսեց ուսումնականի ուսուական իրականությունը, վորպեսզի պարզի, թե վորքանով կիրտուելի յե Մաքսի ուղին այդ իրականության մեջ։ Յեկ պարզելով այդ միանգամայն անխախտ կերպով, նա հաստատ գնաց այդ ուղիով իր ստեղծած կոմունիստական կուսակցության գլխավորությամբ սուաջնորդեց միուսաստանի բանվոր դաստիարակը, — և հասցը հաղթանակի։



Ի. Ալյանովի տունը Սիմբիրսկում, վարեղ Վլադիմիր Իլյիչն ապրել է



«Ազգային գրադարան

NL0146948

16949

Թարգ. Գինույան, տեխ. խմբ՝ Տ. Խաչվանքյան, սրբադ. Ա. Խովան, Գլավիտ 8379 (բ) հրատ. 2804. պտավեր 29, տիրած 4000, հանձնված և արտադրության 1 հունվ. 1934, ստարագրված և տպագրելու 14 հունվ. 1934. Գետելասի տպարան Յերկիցին